

կարասցուք զայս թագաւորութիւնս. նախ ընդ երկու բաժանել երկու թագաւորաւքս Արշակունւաւք՝ զորս կացուցաք, ապա եւ ընդ Նոսա կրծել ջանասցուք, աղբատացուցանել, ի մէջ արկանել ի ծառայութիւն զի մի՛ կարասցեն ի մէջ մեր ամբառնալ զգլուխս:

9 Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեցին: 10 Բաժին կողմանն Պարսից եր թագաւորին հոսորովու, եւ բաժին մասինն Յունաց եր թագաւորին Արշակայ: 11 Բայց եւ ի նոցանէ բազում գաւառք կրծեալք հատեալք այսր անդր, եւ մնաց սակաւ մասն յաշխարհաց երկոցունց առ երկոսեան թագաւորսն: 12 Բայց սակայն երկոքեան թագաւորքն Յայոց՝ Արշակ եւ հոսորով, որ սիւնքն¹ գաւառքն մնացին թագաւորութեանն Յայոց երկոցուն կողմանց ի մէջ իւրեանց, եւ երկոքեան թագաւորքն Արշակունիքն ի մէջ երկու բաժնացն սահմանս արկեալ հաստատեին խաղաղութեամբ, եւ երկիրն Յայոց երկոքեան բաժինքն, երկուց թագաւորացն հնազանդեին իւրաքանչիւր բաժնի իւրաքանչիւր թագաւորի. բայց սակայն մեծ եր հոսորովու բաժին նորա քան զԱրշակայ: 13 Եւ բազում գաւառք յերկոցունցն հատան. նուաղեաց բաժանեցաւ ցրուեցաւ թագաւորութիւնն Յայոց, պակասեաց յիւրմէ մեծութենէն յայն ժամանակն եւ յապայ:

ԳԼՈՒԽ Բ.

1 Յաղագս եպիսկոպոսացն, որ երեւելիք էին յայնմ ժամանակի ի մասինն յաշխարհին հոսորովու յերկրին Յայոց՝ որ ընդ Պարսից ձեռամբ էին. նախ վասն վարուց Չաւինայ:

2 Եւ եր Չաւէնս այս անուանի գաւակ Աղբիանոս եպիսկոպոսի ի գեղջէ Մանաւազկերտոյ. եր սա բարոյիւք այր չարարար, խիստ եւ նախանձոտ: 3 Բայց սակայն կրանս մի, զոր եդ յիւրում ժամանակի. զի ամենայն քահանայից ուսոյց առնել հանդերձ զինուորաց: 4 Չի թողին զկրան առաքելական եկեղեցեացն, սկսան գնալ ըստ իւրեանց մտաց. զի ոչ ըստ կրանիցն ազանէին քահանայքն զպճղնաւորն, որպէս աւրէն եր ի բնէ, այլ սկսան զխոտորկտուրսն ի վերայ ծնագցն ունել: 5 Եւ զարդարեին զհանդերձս իւրեանց պէսպէս նարաւտաւք, եւ սիգային որպէս ոչ վայել եր. եւ զմորթ մեռելոտիս գազանացն քահանայքն անխտիր ազանէին, որ ոչ վայել եր: 6 Եւ ինքն Չաւէնս աթինեալս եւ զտապակեալս զժապաւինեալս նարաւտաւք ազաներ, զսամուրենիս եւ զկնզմենիս եւ զգայլենիս ազաներ. եւ աղուեսենիս զանձամբ արկեալ, անխտիր ի բեմ ելեալ նստեին: 7 Որկորստութեամբ ազահութեամբ անառակութեամբ կայր Չաւէն զամենայն աւուրս կենաց իւրոց. եւ սա կալաւ զտեղի զամենայն աւուրս կենաց իւր ամս երիս:

1 Թերեւս. սակաւ